ՄՐՑՈՒՅԹ ՝ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի ԴԱՍՎԱՐ (1 ԱՇԽԱՏԱՏԵՂ /15/ԺԱՄ), ԿԵՐՊԱՐՎԵՍՏ (2 ԺԱՄ),ՏԵԽՆՈԼՈԳԻԱ (2 ԺԱՄ) ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ԴԿՏՀ-ում՝ https://kadrer.emis.am կայքում լրացնել դիմումը և մուտքագրել հետևյալ փաստաթղթերի լուսապատճենները՝

1) դիմում, ինքնակենսագրություն /Ձև 1/, մեկ լուսանկար 3x4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/ /միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ/,
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
6) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
8) տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
9) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ-ի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատություններից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորուից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն /մասնակցած լինելու դեպքում/:

Ներբեռված փաստաթղթերի բնօրինակները մրցույթի օրվան նախորդող 5 աշխատանքային

օրվա ընթացքում առձեռն ներկայացնել տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձին, որը դրանք համեմատում է ԴԿՏՀ-ում ներբեռնված փաստաթղթերի հետ, ինչից հետո նույն օրը վերադարձվում է:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև մրցույթին նախորդող աշխատանքային օրը առձեռն ներկայացնել, իսկ ԴԿՏՀ-ում ներբեռնված փաստաթղթերի դեպքում՝ նույն համակարգում ներբեռնել անհրաժեշտ փաստաթղթերը:

Փաստաթղթերն ընդունվում են **ս/թ. ապրիլի 13-ից ապրիլի 27-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2026 թ. ապրիլի 30-ին՝ ժամը 14:00-ին**, ՝ՀՀ Լոռու մարզի Միխայելովկայի միջնակարգ դպրոցում՛ ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Լոռու մարզ, գ. Միխայելովկա, 5 փող., շենք 19/1:
Տեղեկությունների համար զանգահարել 098269243 հեռախոսահամարով: